ԿԵՆՍԱԳՈՐԾԵԼՈՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար
ընկ. Ա. Ե. ՔՈՉԻՆՅԱՆԻ ճառը

Ընկերնե՛ր:

Սովետական ժողովուրդը, աշխարհի առաջադեմ ամբողջ մարդկությունն այս օրերին հանդիսավոր պայմաններում, նշում են կոմունիստական կուսակցության և սովետական պետության հիմնադիր Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան 100-ամյակը: Ինչպես հանրապետության բոլոր աշխատավորները, այնպես էլ մեր գիտնականները համակվել են լենինյան տոնը նորանոր նվաճումներով նշանավորելու հայրենասիրական ձգտումով:

Այդ ասպարեզում ձեռք բերած ձեր հաջողությունների մասին քիչ բան չասվեց գիտությունների ակադեմիայի վերջերս տեղի ունեցած տարեկան ժողովում:

Թույլ տվեք, այս պատվավոր ամբիոնից ձեզ՝ մեծ հոբելյանին նվիրված ընդհանուր ժողովի մասնակիցներիդ, հանրապետության գիտնականներին, գիտության ասպարեզի բոլոր աշխատողներին հաղորդել Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության և Մինիստրների սովետի ջերմ ողջույնը և ցանկանալ նորանոր հաջողություններ սովետական առաջավոր գիտության է՛լ ավելի ծաղկման ու բարգավաճման ասպարեզում:

Կուզենայի համառոտակի անդրադառնալ ակադեմիայի գործունեության, ինչպես նաև հանրապետության գիտության զարգացման մի քանի հարցերի: Մեր երկրում ձեռք բերած համաշխարհային պատմական հաղթանակները լենինյան անմար գաղափարների կենդանի մարմնացումն են: Լենինի ղեկավարությամբ կոմունիստական կուսակցության իրագործած Հոկտեմբերյան հեղափոխության արմատական նվաճումը ոչ միայն աշխատավորների սոցիալական, այլև նրանց հոգևոր ու մտավոր ուժերի ազատագրումն էր:

Արդեն սովետական իշխանության հաղթանակից հետո Վլադիմիր Իլյիչը կուսակցության ջանքերն ուղղում էր այն բանին, որպեսզի գիտության ու կուլտուրայի նվաճումներն ի սպաս դրվեն մարդկանց շահերին, դառնան համաժողովրդական սեփականություն:

Կուլտուրական հեղափոխության լենինյան ծրագրի իմաստը նախ և առաջ ժողովրդական լուսավորության գործի ըստ ամենայնի ծավալումն էր: Հարկավոր էր բոլոր պայմանները ստեղծել, որ աշխատավորական ամենալայն մասսաները հաղորդակից լինեին քաղաքականությանը, գիտելիքներին, գեղագիտական արժեքներին, տարածվեր գիտական սոցիալիստական գաղափարախոսությունը և դրա սկզբունքների հիման վրա կազմակերպվեր ժողովրդի ողջ հոգևոր կյանքը:

Սոցիալիստական շինարարության առաջին իսկ տարիներին Լենինը հին մասնագետների օգտագործմանն ու վերադաստիարակմանը զուգահեռ խնդիր էր դնում բանվորներից ու գյուղացիներից ստեղծել նոր մտավորականություն: Նա իրավամբ ընդգծում էր, որ գիտության ներկայացուցիչների, պրոլետարիատի ու տեխնիկայի դաշինքի առաջ չի կարող դիմանալ ոչ մի մութ ուժ:

Լենինի անվան հետ է կապված մեզանում գիտության պետական կազմակերպումը։

Մեր երկրում հաջողությամբ իրականացվեց գիտության կուռ ու միասնական սիստեմ ստեղծելու համապետական գործը։ Նրա կազմակերպման հիմքում դրվեցին գիտական հիմնարկների արդյունավետ տեղաբաշխման, եղբայրական բոլոր հանրապետություններում գիտական կենտրոնների ստեղծման, ազգային որակյալ մասնագետ կադրերի պատրաստման սկզբունքները։ Սովետական գիտության պատմական նվաճումներն այդ ասպարեզում կոմունիստական կուսակցության վարած լենինյան ազգային քաղաքականության փայլուն արդասիքն են։

Եվ այսօր, երբ մեր երկրում կատարվել է գիտական աննախադեպ հեղաշրջում, երբ սովետական գիտությունը նվաճում է նորանոր բարձունքներ, մեզանից յուրաքանչյուրը հիացմունքի զգացումով է նշում մեր գիտնականների ստեղծագործական սխրանքը, հայրենական գիտության պատկառելի ավանդը կոմունիստական շինարարության գործում։

Քիչ չէ նաև մեր հանրապետության գիտնականների բաժինը սովետական գիտության զարգացման ասպարեզում։ Մեր գիտնականների ավագ սերնդի ներկայացուցիչները լավ են հիշում, թե պատերազմից ու սովից քայքայված, գաղթականների ու որբերի երկիր Հայաստանը սովետական իշխանության հաստատման առաջին տարիներին որքան էր զգում որակյալ մասնագետների կարիքը։

Հանրապետության նորաստեղծ կառավարությունը դիմեց հայ մտավորականությանը՝ գիտնականներին ու ինժեներներին, գրողներին, նկարիչներին ու կոմպոզիտորներին՝ նրանց աշխատանքի հրավիրելով Սովետական Հայաստան։

Գիտության ու կուլտուրայի առաջավոր ներկայացուցիչները ջերմորեն արձագանքեցին այդ կոչին։ Արդեն 20-ական թվականներին Հայաստան տեղափոխվեցին Մ. Սարյանը, Ալ. Թամանյանը, Ալ. Սպենդիարյանը, Հ. Մանանդյանը, Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, քիմիկոս Ս. Ղամբարյանը, հիդրոշինարար Հ. Տեր-Աստվածատրյանը, հայտնավոր այլ գործիչներ։ Նրանք բոլորը խանդավառությամբ ձեռնամուխ եղան սոցիալիստական շինարարության, հարազատ ժողովրդի ազգային վերածնության մեծ գործին։

Մեր ժողովուրդը երբեք չի մոռանա իր նորաստեղծ հանրապետության այդ մեծ քաղաքացիների ու հայրենասերների արդար վաստակը, նրանց անգնահատելի ծառայությունները գիտության ու կուլտուրայի զարգացման գործում։

Այսօր մենք չենք կարող երախտագիտության զգացումով չհիշել նաև, որ այդ տարիներին երիտասարդ մասնագետներից շատերը սովորելու մեկնեցին Մոսկվա և Լենինգրադ, ուր ռուս խոշորագույն գիտնականների հոգատարության շնորհիվ աճեցին ու դարձան մեր հանրապետության համար անհրաժեշտ գիտական լավագույն կադրեր։

Հանրապետության կյանքում մեծագույն իրադարձություն էր, որ Հայրենական մեծ պատերազմի ահեղ օրերին հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան՝ Հովսեփ Օրբելու գլխավորությամբ։ Դա մեր ժողովրդի գիտության ու կուլտուրայի նկատմամբ կոմունիստական կուսակցության ու սովետական կառավարության հոգատարության նոր, վառ արտահայտությունն էր, որին հանրապետության գիտնականները պատասխանեցին հայրենանվեր գործերով։

Զարգանալով համամիութենական ու համաշխարհային արդի գիտությանը համընթաց, Հայաստանի գիտական միտքը, ներկայումս միանգամայն որոշակի տեղ է գրավում սովետական գիտության ընդհանուր սիստեմում։ Մեր մասնագետներն ակտիվորեն մասնակցում են սովետական գիտության առջև ծառացած բազմաթիվ խո-

շոր պրոբլեմների մշակման գործին: Գիտության զարգացման աստիճանն առաջին հերթին որոշվում է արդյունքի մակարդակով, նրա որակով, տեսական ու գործնական այն նշանակությամբ, որով նա ներկայանում է համաշխարհային գիտությանը:

Այդ տեսակետից մեծ են հանրապետության գիտնականների նվաճումները ամենատարբեր բնագավառներում:

Մեր երկրում, ինչպես և ամբողջ աշխարհում տեսական աստրոֆիզիկայի և աստղագիտության վերելքը անխզելիորեն կապված են ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի ղեկավարած Բյուրականի աստղադիտարանում կատարվող հետազոտությունների հետ: Վ. Համբարձումյանի ստեղծած գիտական դպրոցը, որն իր հետևորդներն ունի շատ երկրներում, լուրջ ավանդ է ներդնում ժամանակակից աստրոֆիզիկայի տարբեր բնագավառներում: Բյուրականի աստղադիտարանի գիտական նվաճումները համընդհանուր ճանաչման են արժանացել ամբողջ աշխարհում:

Հանրապետության գիտնականների խոշորագույն նվաճումն է էլեկտրոնային օղակաձև արագացուցիչի կառուցումը:

Լայն ճանաչում են գտել Հայաստանի մաթեմատիկոսների աշխատանքները ֆունկցիաների տեսության բնագավառում: Մեծ գործ է կատարվում մաթեմատիկական հաշվիչ մեքենաների ստեղծման ուղղությամբ: Մեխանիկների հաջողությունները սողքի, թաղանթների, սալերի տեսության ասպարեզում գնահատության են արժանանում հանրապետության սահմաններից շատ հեռու:

Հետպատերազմյան տարիներին ակադեմիայի գիտնականները մեծ աշխատանք են կատարել Հայաստանում էլեկտրատեխնիկական, ռադիոտեխնիկական, էլեկտրոնային, սարքաշինական արդյունաբերության ստեղծման և զարգացման բնագավառում: Նրանց ջանքերով է դրվել նաև օպտիկա-մեխանիկական արդյունաբերության հիմքը:

Այժմ մենք կարող ենք հպարտությամբ ասել, որ հանրապետությունում ունենք բազմաճյուղ քիմիական արդյունաբերություն: Քիմիկոսների և գիտության մյուս ճյուղերի մասնագետների համատեղ հետազոտությունների շնորհիվ դրվեցին հանրապետության բնական մի շարք հարստությունների արդյունաբերական կոմպլեքսային մշակման հիմքերը:

Նուրբ օրգանական քիմիայի ասպարեզում աշխատող մասնագետների գործունեությունը բարձր են գնահատել մեր կուսակցությունը և կառավարությունը, իսկ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, հանգուցյալ Ա. Մնջոյանին շնորհվել էր սոցիալիստական աշխատանքի հերոսի պատվավոր կոչում:

Արդյունավետ են բիոքիմիական մի շարք պրոցեսների մեխանիզմների հետազոտման ուղղությամբ բիոքիմիայի ինստիտուտում կատարվող աշխատանքները:

Ակադեմիայի երկրաբանների ուժերով լայնորեն ուսումնասիրվել է հանրապետության ընդերքը: Հայաստանի համեմատաբար փոքր տերիտորիայում կենտրոնացված են հանքային մեծ հարստություններ, որոնց արդյունավետ օգտագործման նոր ուղիներ որոնելն ու գտնելը մեր գիտնականների կարևորագույն խնդիրներից մեկն է:

Պետք է նշել միկրոբիոլոգների արդյունավետ աշխատանքը՝ միկրոբիոլոգիական սինթեզի, ինչպես նաև բույսերի պաշտպանության պրեպարատներ ստեղծելու գործում: Իր առջև դրված խնդիրները հաջողությամբ է լուծում ագրոքիմիական պրոբլեմների և հիդրոպոնիկայի ինստիտուտը:

Բարձր մակարդակի է հասել նաև հասարակական գիտությունը: Գիտական կոմունիզմի ուսմունքով, հասարակական զարգացման օրինաչափությունների հետազոտ-

սան մարքս-լենինյան մեթոդոլոգիայով զինված մեր գիտնականների ուսումնասիրություններն ունեն ոչ միայն տեսական, այլև գործնական մեծ նշանակություն:

Հայ ժողովրդի պատմության, լեզվի, գրականության, մշակույթի բազմաթիվ հարցեր ստացել են նոր լուսաբանում, իսկ ստեղծված աշխատանքներն արժանացել են լայն ճանաչման: Գիտական մեծ արժեք է ներկայացնում հայ ժողովրդի պատմության, ինչպես նաև հայ գրականության բազմահատորյակը:

Մենք մշտապես պետք է հիշենք այն բացառիկ դերը, որ հայ ժողովրդի ճակատագրում ունի 20-րդ դարի, նրա սոցիալիստական վերածննդի դարաշրջանի պատմությունը:

Մեր տնտեսագետները, փիլիսոփաները ստեղծել են աշխատություններ, որոնց մեջ բացահայտվում են լենինյան գաղափարների կենսունակությունն ու նրանց ազդեցությունը արդի համաշխարհային պատմական առաջընթացի վրա:

Հանրապետության գիտական ու կուլտուրական կյանքի այսօրվա բարձր մակարդակի պերճախոս վկայությունն է նաև «Հայկական սովետական հանրագիտարանի» պատրաստումը:

Կուսակցությունը հասարակական գիտությունները՝ պատմագիտությունը, փիլիսոփայությունը, քաղաքատնտեսությունը, բանասիրությունը միշտ էլ համարել է համակուսակցական գործի անբաժանելի մասը: Հասարակական գիտությունները պետք է սովետական մարդկանց զինեն մարքսիստական-լենինյան տեսությամբ, նպաստեն ժողովրդական մասսաների գաղափարական դաստիարակությանը, նոր մարդու, համակողմանի զարգացած մարդու ձևավորմանը:

Ներկայումս սոցիալ-քաղաքական երկու հակադիր սիստեմների միջև համաշխարհային ասպարեզում մղվող գաղափարական սուր պայքարի պայմաններում մեր հասարակագետները իրենց հետազոտություններում, գրավոր ու բանավոր պրոպագանդայում ոչ մի պահ չպետք է թուլացնեն երևույթների ու փաստերի նկատմամբ ցուցաբերվող դասակարգային մոտեցման սրությունը:: Նրանք պետք է հմտորեն օգտագործեն մարքսիստական-լենինյան տեսության հարձակողական թափը, նրա մարտընչող ոգին:

Ոչ մի կոմպրոմիս գաղափարական հարցերում, սա պետք լինի գիտական հիմնարկների, բարձրագույն ուսումնական հաստատությունների հասարակագետների գործունեության նշանաբանը: Նրանք պարտավոր են լինել հասարակական իսկական գործիչներ, առավել ակտիվորեն մասնակցեն աշխատավորների կոմունիստական դաստիարակության խնդիրների լուծմանը:

Այդ առումով հսկայական նշանակություն ունի Վլադիմիր Իլյիչ Լենինի տեսական ժառանգության լայն պրոպագանդան:

Մեծ առաջնորդի ծննդյան 100-ամյակի առթիվ լույս են տեսել «Լենինյան գրադարան» մատենաշարը, նրա 21 անուն կապիտալ աշխատությունները: Հրատարակվել են Վ. Ի. Լենինին նվիրված քաղաքական ու գեղարվեստական քսան գրքեր:

Լենինյան տեսական ժառանգության պրոպագանդման ասպարեզում մեծ գործ են կատարում մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի գիտաշխատողները: Նրանց ջանքերով պատրաստվեց և վերջերս ավարտվեց Վ. Ի. Լենինի երկերի 4-րդ հրատարակության 45 հատորների հայերեն լույս ընծայումը, որը մեծ առաջնորդի հոբելյանին արժանի նվեր էր, նշանակալի իրադարձություն հանրապետության քաղաքական ու գիտական կյանքում:

Գիտության ասպարեզում ձեռք բերված նվաճումները, հիրավի, մեծ են: Մի՞թե հնարավոր է համեմատել 20-ական թվականների Սովետական Հայաստանի գիտու–

թյան երկչոտ քայլերը, առաջին ակցիաներն այսօրվա հզոր, բազմաճյուղ գիտության հսկայական ծավալների, լուծվող պրոբլեմների խորության ու լայնության հետ:

ՍՍՀՄ և եղբայրական հանրապետությունների ակադեմիաների հետ ունեցած մշտական, գործնական սերտ կապերին զուգընթաց, ներկայումս մեր հանրապետության գիտությունների ակադեմիայի համար աշխարհի տարբեր երկրների գիտնականների ու ամբողջ ակադեմիաների հետ համագործակցությունը դարձել է օրինաչափ երևույթ: Հայաստանի ակադեմիան լայն ծրագիր է իրագործում Հունգարիայի, Գերմանական Դեմոկրատական Հանրապետության և Բուլղարիայի ակադեմիաների հետ՝ գիտության մի շարք ճյուղերում համատեղ աշխատանք կատարելու ուղղությամբ:

Հանրապետության կյանքում խոշոր իրադարձություն էր գիտական միությունների միջազգային խորհրդի գործադիր կոմիտեի նիստը, որը կայացավ Երևանում և անցավ խորհրդի պրեզիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի նախագահությամբ:

Գիտության բազմազան բնագավառներում սովետական եղբայրական հանրապետությունների մասնագետների հետ կատարվող համատեղ հետազոտությունները նպաստում են ոչ միայն բնության գաղտնիքներն առավել արդյունավետ բացահայտելուն, ձեռք բերած նվաճումներն արտադրության վերելքին, մեր մարդկանց կենսական շահերին ծառայեցնելուն, այլև ժողովուրդների լենինյան բարեկամության ու պրոլետարական ինտերնացիոնալիզմի ամրապնդմանը: Մեր երկրի բոլոր ժողովուրդների միացյալ ջանքերով է ապահովվում սովետական առաջավոր գիտության հաղթարշավը:

Ընկերնե՛ր:

Կոմունիստական շինարարության պրակտիկան նորանոր վիթխարի պրոբլեմներ է դնում գիտնականների առջև:

ՍՄԿԿ Կենտկոմի դեկտեմբերյան (1969 թ.) պլենումը նշելով երկրի էկոնոմիկայի զարգացման հեռանկարները, արդի էտապում կուսակցության քաղաքական ու կազմակերպչական աշխատանքի խնդիրները, ընդգծեց, որ մեր ժողովրդական տնտեսությունը ներկայումս թևակոխել է մի այնպիսի փուլ, երբ նրա վերելքի կարևորագույն ուղղությունն ավելի ու ավելի է դառնում արտադրության ինտենսիվացումը: Դա պահանջում է որակական խոր փոփոխություններ ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ: Այդ կարևորագույն խնդրի հաջող լուծումն անհնար է առանց արտադրության վերելքին նպաստող ինտենսիվ գործոնների, արդի գիտատեխնիկական հեղափոխության նվաճումների առավելագույն օգտագործման:

Կոմունիստական կուսակցությունը ելնում է լենինյան այն ցուցումից, «որ մեզանում գիտությունը մեռած տառ կամ մոդայական ֆրազ չմնա..., որ գիտությունն, իրոք, միս ու արյուն դառնա, կենցաղի բաղկացուցիչ տարրը՝ լիովին ու իսկապես»:

Խոսքն այն մասին է, որ գիտության ու տեխնիկայի նվաճումները համարձակորեն դուրս գան թղթապանակներից ու լաբորատորիաներից, կյանքի կոչվեն արտադրության մեջ, առավել արդյունավետությամբ նպաստեն կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծմանը, էկոնոմիկայի հարատև վերելքին, ժողովրդի բարեկեցության բարձրացմանը: Մենք ապրում ենք մի այնպիսի ժամանակաշրջան, երբ գիտատեխնիկական հեղաշրջումը առավել լայնորեն է ծավալվում ու հրամայական պահանջներ ներկայացնում ամբողջ աշխարհում: Այն իր ներգործությունն է ունենում թե՛ քաղաքականության, թե՛ կենցաղի և թե՛ հասարակական կյանքի բոլոր ոլորտների վրա:

Մեր ժամանակներում գիտատեխնիկական առաջադիմության ապահովումը զուտ էկոնոմիկական խնդիր չէ: Արդի աշխարհում գիտությունն ու տեխնիկան վերածվել

են սոցիալ-տնտեսական երկու հակադիր սիստեմների մրցության կարևորագույն պլացդարմի:

Հենց այս չափանիշով, կոմունիստական կուսակցության այսօրվա պահանջների բարձրությունից, պետք է գնահատել հանրապետության գիտնականների կատարած աշխատանքը և ծրագրել նոր հնգամյակում նրանց անելիքները:

Կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ մեր հանրապետությունը վերածվել է ինդուստրիալ երկրի, որի հզոր արդյունաբերությունը աչքի է ընկնում իր բազմաճյուղությամբ:

Վերջին տարիներին արդյունաբերության զարգացման ուղղություններում և կառուցվածքում տեղի ունեցած որակական լուրջ տեղաշարժերն ամբողջ սրությամբ դրեցին հասապատասխան մասնագետ և գիտական կադրերի պատրաստման խնդիրը:

Մեր գիտնականների հետազոտություններում ներկայումս ավելի ու ավելի լայն տեղ են զբաղեցնում կիբեռնետիկան, էլեկտրոնիկան, ավտոմատիկան, միջուկային-ֆիզիկան և այլն: Դա բնական է և հասկանալի:

Մարդկությունը շատ անգամ է տեսել գիտական ու տեխնիկական հեղաշրջումներ, որոնք լուծել են մարդու մկանների ուժը բնության ուժերով փոխարինելու պրոբլեմը: Դրանք հասցրել են այն բանին, որ մարդկային ուժն ու էներգիան, արագությունն ու վարպետությունն ավելացել են հարյուրապատիկ, հազարապատիկ անգամ, դրանք լիովին կամ մասամբ փոխարինվելով մեքենաներով:

Բայց ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխության բնորոշ կողմն այն է, որ ներկայումս մեքենան սկսում է ստանձնել նաև մարդու մտավոր գործունեության մի մասը: Արտադրության մեջ մուտք են գործում մեքենաների ինքնակառավարվող սիստեմներ:

Հենց այս մարզն է, որ պետք է դառնա հանրապետության գիտնականների հետազոտությունների կարևորագույն ասպարեզը, եթե մենք ուզում ենք ետ չմնալ արդի գիտության սրընթաց արշավից, եթե մենք ուզում ենք իրապես ապահովել աշխատատար պրոցեսների մեքենայացումն ու կոմպլեքսային ավտոմատացումը, արտադրության ինտենսիվացումը:

Արտադրության արդյունավետության բարձրացմանը, աշխատանքի արտադրողականության աճի տեմպերի ապահովմանը զուգընթաց, գործնական նշանակություն է ստանում արտադրողական ուժերի ճիշտ տեղաբաշխումը հանրապետությունում: Դուք գիտեք, որ Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և Մինիստրների սովետը վերցրել են արդյունաբերական ձեռնարկություններն ապակենտրոնացնելու, համեմատաբար փոքր քաղաքներում ու բնակավայրերում ևս արտադրություններ կազմակերպելու կուրս: Կարելի է վստահ ասել, որ այն լիովին արդարացնում է իրեն: Դա երևում է հանրապետության արդյունաբերական նոր կենտրոնների աշխատանքից ու փորձից:

Հարկավոր է, որ մեր գիտնականները առավել մեծ ակտիվություն հանդես բերեն հանրապետության հումքային և աշխատանքային ռեսուրսները գիտականորեն հիմնավորված օգտագործելու, արտադրողական ուժերի արդյունավետ տեղաբաշխման պրոբլեմները լուծելու ասպարեզում:

Միաժամանակ ես ցանկանում էի ձեր ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ հարկավոր է հանրապետության քաղաքներում ու շրջաններում խելացիորեն տեղաբաշխել նաև գիտության օջախները, որոնք կհանդիսանան այդ վայրերում արտադրության նոր և առաջավոր ճյուղերի հիմնադրման ու զարգացման գիտատեխնիկական բազաներ:

Մի քանի տարի առաջ Լենինականում ստեղծված՝ գեոֆիզիկայի և ինժեներական սեյսմոլոգիայի ինստիտուտը, որի հիմնադիրն ու գիտական ղեկավարը եղավ Հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Նազարովը, լավագույն կերպով ապացուցեց այդ կուրսի կարևորությունն ու գործնական արդյունավետությունը:

Մենք մշտապես պետք է հիշենք, որ մեր ժամանակի բնորոշ գիծը գիտության ավելի ու ավելի ինտենսիվ վերածվելն է հասարակության անմիջական արտադրողական ուժի:

Արտադրության հետ գիտության կապի ամրապնդումը ժողովրդական տնտեսության առաջընթացի, մեր հասարակության հետագա հաջող զարգացման կարևորագույն պայմանն է:

Պետք է բոլոր գիտահետազոտական հիմնարկների կոլեկտիվների ջանքերն արդյունավետորեն նպատակամղել գիտատեխնիկական կարևորագույն պրոբլեմների լուծմանը՝ հատկապես արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության մեջ տեխնիկական պրոգրեսն ապահովելուն, աշխատանքի արտադրողականության աճի տեմպերն ուժեղացնելուն:

Հանրապետության գիտնականները տակավին շատ անելիքներ ունեն ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի՝ գիտական կազմակերպությունների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու և ժողովրդական տնտեսության մեջ գիտության ու տեխնիկայի նվաճումների օգտագործումն արագացնելու միջոցառումների մասին որոշման կենսագործման ուղղությամբ:

Այսօրվա հրամայական պահանջն է աշխատանքի բոլոր օղակներում պետական կարգապահության, ըստ ամենայնի, բարձրացումը, խնայողության ռեժիմի ապահովումը, միջոցների լրիվ մոբիլիզացումը՝ երկրի արտադրողական ուժերի վերընթաց զարգացման համար:

Գիտության բնագավառի աշխատողները պետք է հասնեն գործի ճկուն կազմակերպման, տարբեր մասնագետների ջանքերի ճիշտ զուգակցման: Հարկավոր է ամենուրեք խրախուսել ու պաշտպանել գիտության լավագույն կազմակերպիչներին, ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել գիտական հիմնարկների կառուցվածքի բարելավման ու կատարելագործման, դրանց աշխատանքների կոորդինացման հարցերը:

Ընկերնե՛ր:

Կառավարությունն ամեն տարի հսկայական կապիտալ միջոցներ է հատկացնում գիտահետազոտական հիմնարկների կառուցմանը, եղածների տեխնիկական բազայի ընդլայնմանն ու ամրապնդմանը: Ներկայումս հենց միայն հանրապետության գիտական մտքի կենտրոն՝ գիտությունների ակադեմիայի գծով կառուցվում են ավելի քան 30 օբյեկտներ՝ ինստիտուտներ ու լաբորատորիաներ, բազաներ, փորձարարական արտադրամասեր ու բնակելի շենքեր:

Մեր հանրապետությունում բոլոր պայմանները կան գիտությունը հարաճուն տեմպերով առաջ մղելու, նոր բնագծեր դուրս գալու, սովետական առաջավոր գիտության հետագա վերելքի ապահովման գործում առավել մեծ ավանդ ներդնելու համար:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը համոզված է, որ ինչպես միշտ, այսուհետև ևս մեր հանրապետության բոլոր գիտնականները՝ տոգորված կուսակցությամբ, ժողովրդի և հայրենիքի նկատմամբ պարտքի խոր զգացումով, անշեղորեն կիրագործեն գիտության զարգացման լենինյան պատգամները: *(Ծափահարություններ):*